ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-1312-06.04.2026-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 68-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի առաջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր երկրորդ նախադասությամբ.

«Այդ ընթացքում հանձնաժողովի նախագահին արգելվում է ձեռքում ունենալ այլ իր:»,

2) 3-րդ մասի երկրորդ պարբերության առաջին նախադասության «սահմանված քվեաթերթիկի» բառերը փոխարինել «սահմանված նմուշի քվեաթերթիկի» բառերով,

3) 3-րդ մասի երկրորդ պարբերության չորրորդ նախադասության «քվեարկության ծրարը մարվում է, կամ քվեաթերթիկը դրվում է համապատասխան կուսակցության օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ:» բառերը փոխարինել «քվեաթերթիկը դրվում է համապատասխան կուսակցության օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ (մարման հիմքերի առկայության դեպքում քվեաթերթիկը դրվում է մարված ծրարով):» բառերով,

4) 3-րդ մասի երկրորդ պարբերության հինգերորդ նախադասությունը հանել,

5) 4-րդ մասի առաջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր երրորդ նախադասությամբ .

«Այդ ընթացքում հանձնաժողովի նախագահին արգելվում է ձեռքում ունենալ այլ իր:»,

6) 4-րդ մասի երկրորդ պարբերության երրորդ նախադասության «քվեարկության ծրարը մարվում է, կամ քվեաթերթիկը դրվում է համապատասխան թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ», բառերը փոխարինել «քվեաթերթիկը դրվում է համապատասխան թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ (մարման հիմքերի առկայության դեպքում քվեաթերթիկը դրվում է մարված ծրարով), մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ (մարման հիմքերի առկայության դեպքում քվեաթերթիկը դրվում է մարված ծրարով)» բառերով,

7) 6-րդ և 7-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ավելորդ գրառում կամ նշում կամ սահմանված նմուշի քվեաթերթիկից բացի այլ իր (այդ թվում՝ չսահմանված նմուշի քվեաթերթիկ) պարունակող քվեարկության ծրարի դեպքում, քվեարկության ծրարը դրանում գտնվող քվեաթերթիկի հետ անհապաղ մարվում է այնպես, որ վերահաշվարկի ժամանակ հնարավոր լինի հաստատել մարման հիմքի առկայությունը:

7. Արդյունքներն ամփոփելիս սահմանված նմուշի մարված քվեաթերթիկները հաշվարկվում են որպես անվավեր:»:

Հոդված 2. Օրենքի 69-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքի ավագանու ընտրությունների դեպքում սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե քվեաթերթիկը կամ ծրարը ներառում է որևէ գրառում կամ նշում կամ ծրարում սահմանված նմուշի քվեաթերթիկից բացի, առկա է ցանկացած այլ իր (այդ թվում՝ չսահմանված նմուշի քվեաթերթիկ):»,

2) 2-րդ մասում լրացնել հետևալ բովանդակությամբ՝ նոր 4.1-ին կետով.

«4.1) ծրարը պարունակում է որևէ գրառում կամ նշում կամ ծրարում, սահմանված նմուշի քվեաթերթիկից բացի, առկա է ցանկացած այլ իր (այդ թվում՝ չսահմանված նմուշի քվեաթերթիկ).»:

Հոդված 3. Օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ մասում.

1) երկրորդ նախադասությունը հանել,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ երկրորդ պարբերությամբ.

«Կուսակցությունների դաշինքի անվանումը չի կարող պարունակել անձնանուն, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անվանումներ կամ դրանց շփոթելու աստիճան նման անվանումներ և (կամ) դրանց հոլովաձևեր: Կուսակցությունների դաշինքի անվանումը չի կարող պարունակել վիրավորական կամ զրպարտչական բնույթի բառեր կամ այլ արտահայտություններ:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 68-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի առաջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր երկրորդ նախադասությամբ.

«Այդ ընթացքում հանձնաժողովի նախագահին արգելվում է ձեռքում ունենալ այլ իր:»,

2) 3-րդ մասի երկրորդ պարբերության առաջին նախադասության «սահմանված քվեաթերթիկի» բառերը փոխարինել «սահմանված նմուշի քվեաթերթիկի» բառերով,

3) 3-րդ մասի երկրորդ պարբերության չորրորդ նախադասության «քվեարկության ծրարը մարվում է, կամ քվեաթերթիկը դրվում է համապատասխան կուսակցության օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ:» բառերը փոխարինել «քվեաթերթիկը դրվում է համապատասխան կուսակցության օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ (մարման հիմքերի առկայության դեպքում քվեաթերթիկը դրվում է մարված ծրարով):» բառերով,

4) 3-րդ մասի երկրորդ պարբերության հինգերորդ նախադասությունը հանել,

5) 4-րդ մասի առաջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր երրորդ նախադասությամբ .

«Այդ ընթացքում հանձնաժողովի նախագահին արգելվում է ձեռքում ունենալ այլ իր:»,

~~6) 4-րդ մասի երկրորդ պարբերության երրորդ նախադասության «քվեարկության ծրարը մարվում է, կամ» բառերը հանել, իսկ «փաթեթի մեջ» բառերից հետո լրացնել «կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ (մարման հիմքերի առկայության դեպքում քվեաթերթիկը դրվում է մարված ծրարով)» բառերով,~~

6) 4-րդ մասի երկրորդ պարբերության երրորդ նախադասության «քվեարկության ծրարը մարվում է, կամ քվեաթերթիկը դրվում է համապատասխան թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ», բառերը փոխարինել «քվեաթերթիկը դրվում է համապատասխան թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ (մարման հիմքերի առկայության դեպքում քվեաթերթիկը դրվում է մարված ծրարով), մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ

դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ (մարման հիմքերի առկայության դեպքում քվեաթերթիկը դրվում է մարված ծրարով)» բառերով,

7) 6-րդ և 7-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ավելորդ գրառում կամ նշում կամ սահմանված նմուշի քվեաթերթիկից բացի այլ իր (այդ թվում՝ չսահմանված նմուշի քվեաթերթիկ) պարունակող քվեարկության ծրարի դեպքում, քվեարկության ծրարը դրանում գտնվող քվեաթերթիկի հետ անհապաղ մարվում է այնպես, որ վերահաշվարկի ժամանակ հնարավոր լինի հաստատել մարման հիմքի առկայությունը:

7. Արդյունքներն ամփոփելիս սահմանված նմուշի մարված քվեաթերթիկները հաշվարկվում են որպես անվավեր:»:

Հոդված 2. Օրենքի 69-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքի ավագանու ընտրությունների դեպքում սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե քվեաթերթիկը կամ ծրարը ներառում է որևէ գրառում կամ նշում կամ ծրարում սահմանված նմուշի քվեաթերթիկից բացի, առկա է ցանկացած այլ իր (այդ թվում՝ չսահմանված նմուշի քվեաթերթիկ):»,

2) 2-րդ մասում լրացնել հետևալ բովանդակությամբ՝ նոր 4.1-ին կետով.

«4.1) ծրարը պարունակում է որևէ գրառում կամ նշում կամ ծրարում, սահմանված նմուշի քվեաթերթիկից բացի, առկա է ցանկացած այլ իր (այդ թվում՝ չսահմանված նմուշի քվեաթերթիկ).»:

Հոդված 3. Օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ մասում.

1) երկրորդ նախադասությունը հանել,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ երկրորդ պարբերությամբ.

«Կուսակցությունների դաշինքի անվանումը չի կարող պարունակել անձնանուն, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անվանումներ կամ դրանց շփոթելու աստիճան նման անվանումներ և (կամ) դրանց հոլովաձևեր: Կուսակցությունների դաշինքի անվանումը չի կարող պարունակել վիրավորական կամ զրպարտչական բնույթի բառեր կամ այլ արտահայտություններ:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Պ-1312-06.04.2026-ՊԻ-011/1 օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	Պատգամավոր Արուսյակ Ջուլհակյան	1-ին հոդվածի 6-րդ մաս	1-ին հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. 6) 4-րդ մասի երկրորդ պարբերության երրորդ նախադասության «քվեարկության ծրարը մարվում է, կամ քվեաթերթիկը դրվում է համապատասխան թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ», բառերը փոխարինել «քվեաթերթիկը դրվում է համապատասխան թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ (մարման հիմքերի առկայության դեպքում քվեաթերթիկը դրվում է մարված ծրարով), մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ (մարման հիմքերի առկայության դեպքում քվեաթերթիկը դրվում է մարված ծրարով)» բառերով,	Ընդունվել է:	Ընդունվել է:

2	Պատգամավոր Արուսյակ Ջուլհակյան	1-ին հոդվածի 7-րդ մաս և 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	«իր» բառից հետո լրացնել (այդ թվում՝ չսահմանված նմուշի քվեաթերթիկ) բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3	Պատգամավոր Արուսյակ Ջուլհակյան	2-րդ հոդվածի 2-րդ մաս	«գրառում» բառից հետո լրացնել «կամ նշում» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4	«Հայաստան» խմբակցություն	Նոր հոդված	«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 63-րդ հոդվածը համալրել նոր 4-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝ «Տնային կալանքի տակ գտնվող անձինք իրենց ընտրական իրավունքն իրականացնում են՝ այդ մասին նախապես տեղեկացնելով իրավասու պետական մարմնին: Իրավասու պետական մարմինը պարտավոր է այդ տեղեկությունը ստանալուց հետո, ոչ ուշ, քան մեկ ժամվա ընթացքում արձագանքել և ապահովել տվյալ անձի ընտրական իրավունքի իրացումը»	Չի ընդունվել:	Չի ընդունվել:
5	«Հայաստան» խմբակցություն	Նոր հոդված	«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 9-րդ մասում «վայրերում» բառից հետո ավելացնել հետևյալ նախադասությունը. «ինչպես նաև տնային կալանքի տակ գտնվող անձանց դեպքում սահմանված տնային կալանքը կրելու հասցեում» Եվ համապատասխանաբար՝ Նախագծի հոդված 4-ը դարձնել հոդված 6	Չի ընդունվել:	Չի ընդունվել: